ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 24

500.0 ՔՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ 24.9 ՔՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Սանասար Հակոբի Սարգսյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-1 այգետարածք 10-րդ զանգված թիվ 30 հասցեի բնակավայրերի նշանակության 500.0 քմ հողամասին (կոդ 07-054-0135-0013) կից ինքնակամ զբաղեցրած 24.9 քմ հողամասը: Համայնքի կադաստրային քարտեզի, որակավորված անձի կողմից գծված հողամասի հատակագծի, տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Սանասար Հակոբի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-1 այգետարածք 10-րդ զանգված թիվ 30 հասցեի բնակավայրերի նշանակության 500.0 քմ հողամասին կից ինքնակամ զբաղեցվել է 24.9 քմ մակերեսով հողամաս:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների, հիմք ընդունելով որակավորված անձի կողմից գծված հողամասի հատակագիծը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սանասար Հակոբի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-1 այգետարածք 10-րդ զանգված թիվ 30 հասցեի բնակավայրերի նշանակության 500.0 քմ հողամասից ավել օգտագործվող 24.9 քմ տարածքը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում՝ ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Սանասար Հակոբի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող 500.0 քմ հողամասին կից ավել օգտագործվող 24.9 քմ, մակերեսով ինքնակամ զբաղեցրած հողամասի նկատմամբ՝ համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների, ճանաչել նրա սեփականության իրավունքը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2018 թ. Ապրիլի 07
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 25

ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՇԱԲԱԹՕՐՅԱԿ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղականինքնակառավարմանմասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդև 16-րդ կետերի պահանջների, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2018 թվականի ապրիլի 07-ի N 01/12.2/1566-18 գրությունը՝ ***որոշում եմ.***

1. Պտղնի համայնքի տարածում 2018 թվականի ապրիլի 14-ին հայտարերել շաբաթօրյակ:
2. Համայնքի տարածքում գտնվող կազմակերպությունների /կրթական հաստատություն, պետական և մասնավոր ընկերություններ/ ղեկավարներին՝ շաբաթօրյակի ընթացքում մաքրել և բարեկարգել իրենց կազմակերպությունների տարածքները և շրջակայքը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2018 թ. Ապրիլի 07
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 26

ՍԵՐՈԲ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԻՐԵՆ ՊԱՏԿԱՆՈՂ 525.0 ՔՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ 288.8 ՔՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Սերոբ Սարիբեկի Սահակյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-2 այգետարածք 1-ին թաղամաս թիվ 3 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (կոդ 07-054-0128-0017) 1989-2000 թվականներին ինքնակամ կառուցված այգետնակը, ավտոտնակը, ծածկոցը, ջրավազանը, սանհանգույցը, պարիսպը և սեփականության իրավունքով իրեն պատկանող 525.0 քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին կից ինքնակամ զբաղեցրած 288.8 քմ հողամասի նկատմամբ ճանաչել սեփականության իրավունքը: Համայնքի կադաստրային քարտեզի, որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերի, տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Սերոբ Սարիբեկի Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-2 այգետարածք 1-ին թաղամաս թիվ 3 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում 1989-2000 թվականներին ինքնակամ կառուցվել է 255.0 քմ մակերեսով այգետնակ, 19.5 քմ մակերեսով ավտոտնակ, 15.8 քմ մակերեսով ծածկոց, 14.0 քմ մակերեսով ջրավազան, 2.9 քմ մակերեսով սանհանգույց, 14.8 քմ մակերեսով պարիսպ և սեփականության իրավունքով իրեն պատկանող 525.0 քմ հողամասին կից ինքնակամ զբաղեցվել է 288.8 քմ մակերեսով հողամաս:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի պահանջների, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9; 10; 11; 22.1 կետերի պահանջների, հիմք

ընդունելով որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սերոբ Սարիբեկի Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-2 այգետարածք 1-ին թաղամաս թիվ 3 հասցեի բնակավայրերի նշանակության հողամասում շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, 288.8 քմ տարածքը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում՝ ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Սերոբ Սարիբեկի Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող 255.0 քմ մակերեսով այգետնակը, 19.5 քմ մակերեսով ավտոտնակը, 15.8 քմ մակերեսով ծածկոցը, 14.0 քմ մակերեսով ջրավազանը, 2.9 քմ մակերեսով սանհանգույցը և 14.8 քմ մակերեսով պարիսպը համարել օրինական:
2. Հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար վճար չի գանձվում:
3. Քաղաքացի Սերոբ Սարիբեկի Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող 525.0 քմ հողամասին կից ավել օգտագործվող 20%՝ 105.0 քմ, մակերեսով ինքնակամ զբաղեցրած հողամասի նկատմամբ՝ համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների, ճանաչել նրա սեփականության իրավունքը: Մնացած ավել օգտագործվող 183.8 քմ հողամասը՝ համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների, ուղղակի վաճառքի ձևով, 249454 ՀՀ դրամով (կադաստրային արժեքի 30%, վճարել համայնքային բյուջե 900105225172 հաշվեհամարին) օտարել քաղաքացի Սերոբ Սարիբեկի Սահակյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2018 թ. Ապրիլի 17
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԱՊՐԻԼԻ 2018թվականի N 27

ԳՈՒՐԳԵՆ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ Գ. ՊՏՂՆԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ ԳՈՒՐԳԵՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Գուրգեն Հայկի Պողոսյանը դիմել է Պտղնիի համայնքապետարան Կոտայքի մարզ գ. Պտղնի 2-րդ փողոց թիվ 6 հասցեում գտնվող բնակելի շինությունների և 0.16312 հա /ծածկագիր 07-054-0037-0002/ բնակավայրերի նշանակության հողամասի նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով, քանի որ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը և (կամ) հողհատկացման հիմքերը:

Համաձայն «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների, «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի պահանջների, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 1328-Ն որոշման և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9; 10; 11; 13; 22.1 կետերի պահանջների, հիմք ընդունելով Գուրգեն Պողոսյանի դիմումը և «Գևորգ Աբրահամյան Սուրիկի» ԱՁ-ի կողմից կազմված հողամասի և շինությունների հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գուրգեն Պողոսյանին հատկացված հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, հողամասը և շինությունները կառուցված չեն և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ

հողվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ *որոշում եմ.*

1. Ճանաչել Գուրգեն Հայկի Պողոսյանի /ծնված 29.12.1984թ./ սեփականության իրավունքը, ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքի կադաստրային 07-054-0037-0002 ծածկագրով փաստացի օգտագործվող բնակավայրերի նշանակության 0.16312 հա մակերեսով գ. Պտղնի 2-րդ փողոց թիվ 6 հասցեում գտնվող հողամասի նկատմամբ, որը նրա կողմից փաստացի օգտագործվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:
2. Վերականգնել գ. Պտղնի 2-րդ փողոց թիվ 6 հասցեում գտնվող 0.16312 հա հողամասի վրա մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված 174.6 քմ մակերեսով բնակելի տան և 6.7 քմ մակերեսով պարիսպի սեփականության իրավունքը:
3. Հողամասի սահմանները որոշվում են «Գևորգ Աբրահամյան Սուրիկի» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծի /կցվում է/:
4. Քաղաքացի Գուրգեն Հայկի Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող 2002 թվականին ինքնակամ կառուցված 26.1 քմ և 29.0 քմ մակերեսով օժանդակ շինությունները համարել օրինական:
5. Պարտավորեցնել քաղաքացի Գուրգեն Հայկի Պողոսյանին ինքնակամ կառուցված 26.1 քմ և 29.0 քմ մակերեսով օժանդակ շինությունների համար համայնքային բյուջե 900105225214 հաշվեհամարին վճարել 85960 (ութսուն հինգ հազար ինն հարյուր վաթսուն) ՀՀ դրամ:
6. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Գուրգեն Հայկի Պողոսյանի սեփականության իրավունքը հողամասի և բնակելի շինությունների նկատմամբ:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2018 թ. Ապրիլի 27
գ.Պտղնի